# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 747-Ն |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (13.06.2025-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2025.06.09-2025.06.22<br>Պաշտոնական հրապարակման օրը 12.06.2025 |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 12.06.2025 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 12.06.2025 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 13.06.2025 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2025 թվականի N 747-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ցանկի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների կամ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ն. Փաշինյան**

Երևան

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 12 հունիսի 2025 թվական:**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |